ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԳԱԳԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Առաջին հայացքից ինքնըստինքյան հասկանալի թվացող որոշ հարցեր առավել մանրամասն դիտարկելու դեպքում կարող են վերածվել գիտական հիմնախնդրի: Դրանց թվին է պատկանում հոգեկան իրականության տրվածության խնդիրը: Առօրյա կենսագործունեության համար այն միգուցե չունի որևէ էական նշանակություն, բայց մեթոդաբանական տեսանկյունից դրա նշանակությունն առաջնային է: Բանն այն է, որ հոգեբանության լինելությունը, հոգեբանության կերպը կախված են հենց այս խնդրին տրվող պատասխանից: Չէ՞ որ եթե հոգեբանությունը համարենք յուրահատուկ գիտակարգ, որն ուսումնասիրում, նկարագրում և բացատրում է հոգեկան իրականությունը, անհրաժեշտաբար պետք է հիմնավորենք այդ իրականության տրվածությունն ու առանձնահատկությունը:

Այդպիսի հիմնավորման փորձը, սակայն, շատ արագ հայտնվում է փակուղում: Բանն այն է, որ հոգեկան իրականության տրվածության խնդիրն անմիջականորեն կրում է մի շարք անլուծելի թվացող փիլիսոփայական հիմնախնդիրների ազդեցությունը. այն արմատապես փոխում է իր կերպը՝ կախված այն հանգամանքից, թե ինչ փիլիսոփայական դիրքերից են դրան մոտենում: Դեկարտը, օրինակ, գտնում էր, որ հոգեկան իրականությունը հավաստիորեն և անմիջականորեն ճանաչվող միակ իրականությունն է: Նա մասնավորապես գրում է. «Մեր հոգին, քանի որ այն մարմնից տարբերվող նախահիմք է, մեզ հայտնի է դառնում միայն շնորհիվ այն բանի, որ նա մտածում է, այսինքն՝ ընմբռնում է, ցանկանում, երևակայում, վերհիշում, զգում, քանզի հոգու այս գործառույթները մտածողության տարբեր ձևեր են»[1]: Մտածողությունը «ճանաչվում է ավելի շուտ և հավաստիորեն, քան ցանկացած մարմնական իր, քանի որ այն արդեն ընկալել ենք, իսկ մնացածի վերաբերյալ դեռևս կասկածներ ունենք»[2]:

Այստեղ, սակայն, առաջ է գալիս մտածողության ճանաչման խնդիրը. ինչպե՞ս է մտածողը տեղեկանում, որ ինքը մտածում է: Դեկարտը հարցին պատասխանում է՝ ներմուծելով գիտակցություն հաս-

[1] **Декарт Р.** Описание человеческого тела. Об образовании животного // **Декарт Р**. Сочинения в 2 т. Т. 1. М. 1989, с. 423-424.

[2] **Декарт Р.** Первоначала философии // Сочинения в 2 т. Т. 1. М., 1989, с. 316.

կացությունը. «Մտածողություն բառի տակ ես հասկանում եմ այն ամենը, ինչը մեր մեջ կատարվում է մեր կողմից գիտակցվելով, այնպես, որ մենք տեղեկանում ենք դրա մասին»[3]: Ստացվում է, որ մտածողությունն օժտված է ինքն իրեն մտածելու՝ գիտակցելու կարողությամբ: Ընդ որում, ըստ Դեկարտի, հոգեկանն ամբողջությամբ գիտակցելի է: «Իմ մեջ չկա ոչինչ,-գրում է Դեկարտը, - ինչը ես ինչ-որ կերպ չկարողանամ գիտակցել»[4]:

Դեկարտի տեսակետը զգալի ազդեցություն ունեցավ հոգեբանության հետագա զարգացման վրա: 19-րդ դարում շատ հետազոտողներ առանց քննադատության ընդունում էին, որ աշխարհը տրված է գիտակցության մեջ: Սա, իհարկե, կարող էր հանգեցնել ծայրահեղական փսիխոլոգիզմի. չէ՞ որ գիտակցությունը հոգեբանության առարկան է, հետևաբար մյուս գիտությունների անհրաժեշտություն ուղղակի չկա: Սակայն ինչ-ինչ պատճառներով այս խնդրով հետաքրքրված բազմաթիվ հետազոտողներ խուսափեցին ծայրահեղական դրսևորումներից՝ գնալով փոխզիջման ճանապարհով: Նրանք փորձում էին գիտակցության բովանդակություններում գտնել հոգեկան և նյութական երևույթների տարբերությունը: Որպես օրինակ բերենք Ռուդոլֆ Էյսլերի խոսքերը. «Իրականությունը կազմված է ոչ թե «ես»-ի ապրումների և մարմնական իրերի աշխարհի գումարից, այլ ապրումներից, որոնք, որպես այդպիսիք, հոգեկան են, այն դեպքում, երբ դրանց բովանդակությունների մի մասը՝ զգայական ընկալման բովանդակությունները, շնորհիվ իրենց փոխհարաբերությունների, պետք է մտածվեն և մեկնաբանվեն որպես առարկաներ, մարմիններ և իրեր, բայց կարող են և դիտարկվել որպես գիտակցության բովանդակություններ: Ներքին փորձի տեսակետին է հոգեբանը, արտաքին փորձի տեսակետին՝ բնախույզը, փորձի ամբողջականության տեսակետին՝ փիլիսոփան»[5]:

Ինչպես տեսնում ենք, ըստ Էյսլերի, իրականությունն ունի զուտ հոգեկան բնույթ, այն կազմված է բացառապես «ես»-ի ապրումներից: Բայց ինչ-որ տարօրինակ կերպով այդ ապրումները, լինելով գիտակցության բովանդակություն, այնուամենայնիվ ներկայացնում են միմյանցից էապես տարբերվող իրականություններ: Որպես գիտակցության բովանդակություններում հոգեկանի և ֆիզիկականի տարբերակման հիմք Էյսլերն ընդունում է *արտաքին* և *ներքին* որոշիչները:

Բայց ինչպե՞ս կարելի է տարբերակել արտաքինն ու ներքինը, և արդյո՞ք այդ տարբերակումը ինչ-որ ձևով տրված է գիտակցությանը: Անդրադառնալով հոգեկանի տրվածության խնդրին՝ Վիլհելմ Վունդտը նշում է, որ հոգեբանության՝ որպես ներքին փորձի մասին գիտության

---

[3] Նույն տեղում, էջ 316-317:

[4] **Декарт Р.** Размышления о первой философии. Ответ автора на первые возражения. // Сочинения в 2 т. М., 1994, с. 87.

[5] **Рудольф Эйслер** Сознание и бытие // "Новые идеи в философии". Сборник, № 5. Теория познания II. СПб., 1913, с. 147-148.

սահմանումը կարող է հանգեցնել թյուրիմացության, թե այն գործ ունի այնպիսի առարկաների հետ, որոնք էականորեն տարբերվում են «արտաքին փորձի» առարկաներից: Սակայն «ներքին զգայություն», որը որպես հոգեկան ընկալման գործիք կարելի է հակադրել բնագիտական ճանաչողության արտաքին զգայության գործիքին, ընդհանրապես գոյություն չունի: Հոգեկան այն բոլոր պատկերացումները, որոնց որակներն ուսումնասիրում է հոգեբանությունը, առաջանում են արտաքին զգայությունների գործունեության շնորհիվ, ճիշտ այնպես, ինչպես առաջանում են այն ընկալումները, որոնց վրա հիմնվում է բնագիտությունը, իսկ սուբյեկտիվ հոգեկան գործընթացները, որոնք զանց է առնում բնագիտությունը, ինչպիսիք են, օրինակ՝ զգացմունքները, հույզերը, կամային գործողությունները, տրված են մեզ ոչ թե ընկալման ինչոր հատուկ օրգանի միջոցով, այլ անմիջականորեն և անքակտելիորեն կապվում են արտաքին առարկաների ազդեցությամբ առաջացող պատկերացումների հետ[6]:

Այս ամենից Վունդտը եզրակացնում է, որ արտաքին փորձ և ներքին փորձ արտահայտությունները տարբերվում են ոչ թե հետազոտության առարկայով, այլ մեկ ամբողջականություն կազմող փորձի՝ գիտական վերամշակման ընթացքում ընդունված տեսակետով: Դրանք, ըստ Վունդտի, առանձնանում են, քանի որ ցանկացած փորձ բաժանվում է երկու գործոնի՝ տրված բովանդակության և այդ իսկ բովանդակության ընկալման: Առաջինը փորձառության օբյեկտն է, երկրորդը՝ փորձառող սուբյեկտը: Ըստ այդմ՝ տարբերվում են փորձառության օբյեկտն ուսումնասիրող բնագիտությունը, որտեղ առարկաների որակները դիտարկվում են սուբյեկտից անկախ, և հոգեբանությունը, որն ուսումնասիրում է փորձի ողջ բովանդակությունը սուբյեկտի հետ կապի և սուբյեկտի կողմից փորձի մեջ որոշ յուրահատկությունների ներմուծելու տեսանկյունից: Եվ քանի որ բնագիտական տեսակետը ենթադրում է վերացարկում ցանկացած իրական փորձի մեջ առկա սուբյեկտիվ գործոնից, Վունդտն առաջարկում է այն անվանել միջնորդավորված փորձի սկզբնակետ: Իսկ հոգեբանական տեսակետը, որը խուսափում է այդ վերացարկումից և դրանից բխող հետևանքներից, համապատասխանում է անմիջական փորձին[7]:

Իրականում, նշում է Վունդտը, փորձը ոչ թե իրար հպվող տարբեր ոլորտների շարք է, այլ մեկ կապակցված ամբողջություն է, որն իր յուրաքանչյուր հատվածում ենթադրում է ինչպես ճանաչող սուբյեկտի, այնպես էլ ճանաչվող օբյեկտի գոյությունը: «Հոգեբանությունը,- գրում է Վունդտը,- որպես առարկա ունի փորձի ողջ բովանդակությունը դրա անմիջական ձևով»[8]:

---

[6] Տե՛ս **Вундт В.** Очерк психологии. СПб., 1896, էջ 1-2:
[7] Տե՛ս նույն տեղը, էջ 2:
[8] Նույն տեղում, էջ 3:

Կարելի է նկատել, որ Վունդտը առավելապես շեշտում է դիտակետի տարբերությունը: Բնագիտությունն ու հոգեբանությունը տարբերվում են ոչ թե հետազոտվող իրականությունների յուրահատկություններով, այլ հետազոտման դիտակետի տարբերություններով: Դրանք երկուսն էլ հետազոտում են փորձը՝ բնագիտությունը՝ վերացարկվելով փորձառության սուբյեկտից, հոգեբանությունը՝ անմիջականորեն:

Որքանո՞վ է նման լուծումը նպաստում հոգեկան և ֆիզիկական իրականությունների տարբերակման հիմնավորմանը: Եթե հետազոտվող իրականությունը նույնն է, ապա ինչո՞վ է պայմանավորված երկու տարբեր դիտակետերի անհրաժեշտությունը: Չէ՞ որ կարելի կլիներ բավարարվել միայն այն դիտակետով, որը ներառում է մյուսը, իսկ դա, ըստ Վունդտի, հոգեբանության դիտակետն է:

Խնդրի այլ, բավականին յուրօրինակ լուծում է առաջարկում Ֆրանց Բրենթանոն: Դիտարկելով հոգեբանությունը որպես գիտություն հոգեկան երևույթների մասին[9]՝ նա ֆիզիկական և հոգեկան երևույթների տարբերակման չափանիշ է ընդունում վերջիններիս ինտենցիոնալությունը: Յուրաքանչյուր հոգեկան երևույթ, ըստ Բրենթանոյի, բնութագրվում է որոշակի միտվածությամբ և ներառում է իր դրսևորման առարկան: Մտապատկերում պատկերված է ինչ-որ բան, դատողությունն ինչ-որ բան հաստատում կամ ժխտում է, սերը, ատելությունը, ցանկությունը միշտ ենթադրում են որոշակի առարկա, որին դրանք ուղղված են: Այսպիսի ինտենցիոնալ լինելությունը հատուկ է բացառապես հոգեկան երևույթներին: Ոչ մի ֆիզիկական երևույթ չի բնութագրվում դրանով: «Հետևաբար, - գրում է Բրենթանոն, - մենք կարող ենք հոգեկան երևույթները սահմանել որպես այնպիսի երևույթներ, որոնք ներառում են իրենց միտվածության առարկան»[10]:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե Բրենթանոյի առաջարկած տարբերակը որոշակիացնում է քննարկվող խնդիրը: Ինտենցիոնալությունը՝ որպես հոգեկան երևույթների բնութագրիչ, կարող է ֆիզիկական երևույթներից դրանց առանձնացման հիմք դառնալ: Այդուհանդերձ, ֆենոմենոլոգիայի հետագա զարգացումը ցույց տվեց, որ այս մոտեցումը նույնպես փակուղային է: Բանն այն է, որ ինքը՝ գիտակցությունը, նույնպես անհրաժեշտաբար պարունակում է ինտենցիոնալ առարկա: Սին, անբովանդակ գիտակցություն սկզբունքորեն հնարավոր չէ, գիտակցումը միշտ ինչ-որ բանի գիտակցում է[11]: Եվ քանի որ աշխարհը տրված է գիտակցությամբ, իսկ գիտակցությունն իր հերթին անհրաժեշտաբար ենթադրում է առարկա, ուրեմն՝ «գիտակցությունն ու աշխարհը տրված են միաժամանակ»[12]: Դա կարող է նշանակել, որ

---

[9] Տե՛ս **Brentano F.** Psychologie vom empirischen Standpunkte. Erster Band. Leipzig, Verlag von Dunker & Humblot, 1874, էջ 24:

[10] Նույն տեղում, էջ 115-116:

[11] Տե՛ս **Гуссерль Э.** Картезианские медитации. М., 2010, էջ 49:

[12] **Сартр Ж. П**. Проблемы метода: Статьи. М., 2008, с. 177-180.

սկզբունքորեն անհնար է տարբերակել գիտակցությունը դրա բովանդակությունից: Խնդիրն էլ ավելի է խորանում, երբ գիտակցությունը՝ որպես առարկա, ունի ինքն իրեն, իր բովանդակությունը:

Գիտակցության ինքնաանդրադարձի խնդիրը լուրջ խոչընդոտ է դրա հետազոտության համար: Ուիլիամ Ջեյմսը, ով ստեղծագործական վաղ շրջանում հոգեբանությունը դիտարկում էր որպես գիտակցության վիճակների նկարագրությունն ու բացատրությունը տվող բնական գիտություն[13], հետագայում ընդհանրապես հրաժարվում է գիտակցությունից՝ որպես հետազոտության առարկա ընդունելով զուտ փորձը: Խոսելով գիտակցության և դրա բովանդակության տարբերակման մասին՝ նա գրում է. «Ես համոզված եմ, որ փորձը չունի այդպիսի ներքին երկատվածություն, և դրա բաժանումը գիտակցության և բովանդակության իրականանում է ոչ թե հանման, այլ գումարման ճանապարհով: Տվյալ կոնկրետ փորձին գումարվում է այլ փորձերի ամբողջ շարք, ինչի հետևանքով կարող են փոխվել մասնավորապես դրա իմաստն ու գործառույթը»[14]:

Սակայն զուտ փորձի ընդունումը վերացնում է հոգեկանի և ֆիզիկականի միջև տարբերությունները: Խոսելով մետաֆիզիկական «մարմին-հոգի», «նյութ-ոգի», «ֆիզիկական-հոգեկան» երկվությունների մասին՝ Ռիխարդ Ավենարիուսը նշում է, որ այդ հակադրությունն անհետանում է զուտ «ամբողջական փորձից», քանի որ չխեղաթյուրված «ամբողջական փորձի» սահմանում չկա ո՛չ «ֆիզիկական», ո՛չ «հոգեկան»՝ այդ հասկացությունների բացարձակ մետաֆիզիկական իմաստով[15]: Ավենարիուսը Վունդտի նմանությամբ չի տարաբաժանում ամբողջական փորձը: Նրա կարծիքով, դրանում հնարավոր չէ ինչ-որ կերպ առանձնացնել հոգեկան և ֆիզիկական տրվածությունները: Ստացվում է, որ եթե ընդունենք զուտ փորձի փիլիսոփայության տեսակետը, ապա ստիպված կլինենք հրաժարվելու հոգեկան իրականության մասին յուրահատուկ գիտությունից՝ հոգեբանությունից, քանի որ դրա ենթադրվող առարկան՝ հոգեկան իրականությունը, որպես յուրահատուկ իրականություն տրված չէ զուտ փորձով:

Ինչպես տեսնում ենք, հոգեկան իրականության տրվածության խնդրի լուծումները հանգեցնում են նոր խնդիրների: Այն դեպքում, երբ ընդունվում է իրականության՝ հոգեկանի միջոցով տրվածության դրույթը, առաջ է գալիս փսիխոլոգիզմի վտանգը: Իրականությունն ամբողջությամբ նույնացվում է հոգեկանին, ինչը դժվարացնում է դրանում հոգեկան և ֆիզիկական բաղադրիչների տարբերակումը: Հակառակ պարագայում, երբ ընդունվում է զուտ փորձի տեսակետը, հոգեկան ի-

---

[13] Տե՛ս **James W.** Psychology. New York, Henry Holt and Company, 1900, էջ 1:

[14] **James W.** Does «Consciousness» Exist? // Jurnal of Philosophy, Psychology, and Scientific Methods, 1904, Vol. 1, № 18, p. 480.

[15] Տե՛ս **Авенариус Р.** О предмете психологии. М., 2003, էջ 50:

բականությունը կորցնում է իր յուրահատկությունը, այն տարրալուծվում է «ամբողջական փորձի» մեջ, ինչի հետևանքով ընդհանրապես վերանում է հոգեբանության անհրաժեշտությունը: Այս երևույթը, ըստ ամենայնի, պայմանավորված է այն հանգամանքով, որ, սկսած Դեկարտի փիլիսոփայությունից, հոգեկանը դիտվում էր որպես անմիջականորեն տրված, անմիջականորեն ապրվող և ճանաչվող իրականություն: Սակայն 19-րդ դարավերջի հոգեբանության պատմությունը ցույց է տալիս, որ անմիջականորեն տրված հոգեկանի որոնումներն անարդյունավետ էին և անհրաժեշտ էին այլ մոտեցումներ:

Բանալի բառեր – *հոգեկան իրականություն, գիտակցություն, գիտակցության ֆենոմեն, անմիջական փորձ, զուտ փորձ*

ГАГИК ПЕТРОСЯН – *Проблема данности психической реальности*. – В статье показано, что попытки решить указанную в заголовке проблему терпели неудачу. Дело в том, что в её основе лежат более общие нерешённые философские проблемы. Решению проблемы, в частности, мешает предположение о непосредственной и приоритетной данности психического в сознании.

Ключевые слова: *психическая реальность, сознание, феномен сознания, непосредственный опыт, чистый опыт*

GAGIK PETROSYAN – *The Problem of the Givenness of Mental Reality*. – The article presents the issue of the givenness of mental reality. The author tries to show that the solutions to that problem have largely failed because there are more general, unresolved philosophical problems before this issue, and researchers approach the question from this or that philosophical position. According to the author, in particular, there is a prediction which prevents the solution to the problem: the prediction concerns to the immediacy and priority of the givenness of mind in the consciousness.

Key words: *mental reality, consciousness, phenomenon of consciousness, direct experience, pure experience*